

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՂԴԱՐՄԱՆ
ԳՈՒՅԱՐԱԿԱՆ ԻՍՏՈՐԻԿԱԿԱՆ ԹԱՐԱՐԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատություններ

№ 5, 1959

Տրսդի

ՀՆԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ

ԷՐՄԱՆ ԽԱՆՉԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Մայրենի հողն իր բնդերքում, հայ ժողովրդի անցյալի նյութական մշակույթի հարուստ գանձերի հետ միասին պահպանել է նաև սակավաթիվ երաժշտական գործիքներ:

Դարեր շարունակ երաժշտական գործիքը մարդու ներքնաշխարհը, նրա հողերն ու ապրումները դրսենութելու միջոց է հանդիսացել: Ուստի, հայ ժողովրդի կուլտուրան ուսումնասիրելիս, հնարավոր չէ աչքաթող անել նրա կարևոր բնագավառներից մեկը՝ երաժշտական գործիքների պատմությունը:

Հայկական երաժշտական գործիքների պատմությունը նույնքան հին է, որքան և մյուս արվեստների պատմությունը; այն միքանի հազարամյակ կարելի է հաշվել:

Բնդերքի պրատումները, գերախտաբար քիչ երաժշտական գործիքներ են տվել, որովհետև նրանք պատրաստված լինելով ոչ դիմացկուն նյութերից՝ փալտից, եղնգնից, մորթոց և այլն, ժամանակի ընթացքում քայլալիքի ոչնչացել են: Սակայն, հնագիտական նյութի պակասը որոշ չափով լրացնում են ձեռագրերի մանրանկարները և մեր մատենագիրների գործերում երաժշտական գործիքների վերաբերյալ պահպանված հատ ու կենտ տվյալները:

Հայաստանում պեղումներից հայտնաբերված ամենահին հարգածալին երաժշտական գործիքները, աղմկալին խմբին պատկանող բրոնզե զանգակները, բոժոժները և չխչխկաններն են, որոնք հայկական լեռնաշխարհում լայն տարածում են ունեցել սկսած 2-րդ հազարամյակի կեսերից մ.թ.ա.: Դրանց համեմատությունը ազգագրական նյութի հետ, թույլ է տալիս ենթադրելու, որ մեծ մասմբ ծառալի են ձայնի միջոցով չարը վանելուն:

Հնագույն շրջանի հարգածալին գործիքներից են նաև մի զույգ բրոնզե ծնծղաները, որոնք գտնվել են 1948 թ. Կարմիր բլուրի պեղումների ժամանակ և վերաբերում են 7-րդ դարին:

մ.թ.ա.¹: Ծնծղաներից մեկը համարյա ամբողջական է, միայն եղբն ու բռնակի տեղն է մի փոքր մաշված: Այս բաղկացած է երեք մասից՝ շրջանաձև սկավառակից, միջին մասում կիսագնդաձև գմբեթից և բռնակից: Բռնակն ամրացված է գմբեթի գագաթին: Հարթ մասի շառավիղը 4,5 սմ է, իսկ գմբեթի տրամագիծը 9 սմ ամբողջ ծնծղայի տրամագիծը 18 սմ է (նկ. 25. ա): Երկրորդ ծնծղան: որ գտնվել է առաջինի հետ միասին, նույն չափերն ունի և առաջինի գույքն է կազմում, բայց շատ խիստ քայլալիված է, պահպանվել է միայն քառորդ մասը:

Այս ծնծղաներն իրենց ձեռվ շատ քիչ են տարրերվում ներկայիս փոքր ծնծղաներից, փոքր են, մասերի մեջ կան համաչափությունների տարրերություն: Հին ծնծղաների գմբեթն ավելի մեծ է և ավելի ուսուցիկ, իսկ հարթ մասը՝ ավելի փոքր: Փամանակակից ծնծղաները բռնակ չունեն, դրա փոխարեն անցք է արված գագաթին և պարան հագցված: Նվազելիս պարանից են ըըստ նույն և հարիւմածում, որի շնորհիվ զողանշն ավելի հնչեղ և երկարատես է լինում:

Համեմատական երաժշտագիտության ավելիներից երեսում է, որ շատ ժողովուրդների մեջ երաժշտական գործիքների զարգացումը ընդհանուր գծերով միատեսակ է ընթացել:




Խաշնարած ժողովուրդների մոտ, միշտ էլ կարելի է հանդիպել հովվական սրնգի, համարյա բոլոր արևելյան ժողովուրդներն օգտագործել են ուազմի պղնձլա փողը, պարկապղուկը, թմբուկը: Դրանք մինչև այժմ էլ օգտագործվում են շատ ժողովուրդների կողմից տարրեր ձևերով և անունով:

Ասուրա-բարելական բարձրաքանդակներում պատկերված երաժիշտների շքերթում ի թիվս այլ երաժշտական գործիքների տեսնում ենք նաև թմբուկ, ծնծղա, իսկ ասուրացիների կվարտետում՝ քնարի, ցիտրալի կողքին քանդակված են նաև ծնծղա, դափու

Հարվածային գործիքներն ուղեկցել են ինչպես ուազմական երթերին, այնպես էլ թափորներին ու զոհաբերության ծիսակատարություններին: Այդ ծիսակատարություններին նրանք առանձին հանդիսավորություն են տպել:

Անշուշտ մեր հարվածային գործիքներն էլ պետք է որ նույնանման հատկանիշներ ունենալին, քանի որ հայկական լեռնաշխարհի բնիկները, դեռ շատ հին ժամանակներից, սերտ կապեր

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, т. I, 1950, стр. 54.



Նկ. 25. ա) Ծնծղա, բ և գ) երկկողմանի ձագաբաճե սնտուի կավամաններ, դ) եղջբավող

ունենալով հին արևելքի ժողովուրդների հետ, կուլտուրապես աղդել և ազգվել են նրանցից:

Նկատելի է, որ այժմ լան հարվածալին գործիքներն իրենց նախնական ձեւերից քիչ են տարբերվում:

Ազգագրական տվյալները հաստատում են, որ թմրուկը դեռ նախնադարյան շրջանում պատրաստվել է թաղանթն ամրացնելով կավե սովորական կիսագնդաձե թաղարների, շրջանակների վրա:

Հայաստանում շատ կան պեղումներից հայտնաբերված կիսագնդաձե թաղարներ, որոնք կարող էին թմրուկի դեր կատարել: Հավանաբար դրանց զարգացած ձեն էլ միջնադարում հանդիսացնել է նաղարան:

Բացի այդ, եզել են նաև միաթաղանթ կոնաձեև և ավազե ժամացուցի տիպի երկթաղանթ թմրուկներ, որոնք այժմ էլ օգտագործում են Եգիպտոսում, Մելանեզիայում, Սիրիայում, Պաղեստինում:

Պարանոցից կախվող երկթաղանթ թմրուկի օրինակներ տեսնում ենք և արևելյան ծագում ունեցող հնագույն արծաթե և ոսկյա ամաների վրալի զարդաքանդակներում:

Սխալված չենք լինի, եթե Հայաստանում պեղումներից հայտնաբերված մ.թ.ա. առաջին հազարամյակի ձագարաձե, սնամեջ կավե առարկաները նույնպես համարենք թմրուկների ուղերվուարներ (նկ. 25. բ, գ):

Հարվածալին գործիքների որոշ օրինակներ պահպանվել են և հայկական մանրանկարներում:




Դափի ամենավաղ օրինակը մենք տեսնում ենք 1288 թ. Շահթումի ձաշոցը-ում, որի նկարիչը Թորոս Ռոսլինն է (Մատենադարանի ձեռագիր № 987) (նկ. 32. թ):

1401 թ. Թավրիզի Աստվածաշնչում (Մատենադարանի ձեռագիր № 184, էջ 211) պատկերված կլարտետում (որը կազմված է փողալին և հարվածալին գործիքներից) մենք տեսնում ենք լիտավորի հնագույն օրինակը (նկ. 32. թ): Ավելի ուշ շրջանի ձեռագրերում կան դահրալի, դհոլի, նաղարալի նկարներ (նկ. 32. դ):

Մեր մատենագիրները հարվածալին գործիքների մասին խիստ ժլատ տեղեկություններ են տալիս:

Փավստոս Բուղանդը (5-րդ դար) Պապ թագավորի սպանությանը նախորդած խնջույքի նկարագրության մեջ, այլ գործիքների շարքում հիշում է և թմրուկը:

«Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին որախութեանց



Եկ. 26. ա) Արինգ, բ) սըինգ, գ) սըինգ, դ) սըինգ թութակ,
ե) պարկապղուկի ծայր, զ) ասլակի սըվակ ջութակահարի պատկերով:

նուագն մատուցին արքալին Պապակ և առ հասարակ թմրկահարք և սրնգահարք, քնարահարք և փողհարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձախիւք բարբառեացնաւ¹:

Թմբուկի մասին հիշատակում է նաև Գր. Մագիստրոսը (10-րդ դար) իր թղթերում: Դանիել երաժշտին ուղղված նամակում նա ասում է, որ ինքը «գոհնիկ» ժողովրդի պատմածից լսել է, որ Արտաշես թագավորը հիշելով իր երիտասարդաթյունը, նավասարդի առավոտը, ասում է, իրենք փող էին փչում և թմբուկարկում, ինչպես վայել էր թագավորներին:

«Ո՛ տալր ինձ, ասէք, զծախ ծխանի զառաւօտն նաւասարդի, զվագելն եղանց և զվագելն եղերուաց. մեք փող հարտաք, և թմրկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ զախ ասեն լի վախճանելն իւրում, զոր և ի գոհնիկս աւանդեալ գտաք, ողջ և բառ²:

14-րդ դարում Կ. Երզնկացու մոտ հանդիպում ենք «աապլ» գործիքին³, որը մեկնաբանվում է որպես թմբուկ: Իսկ 17-րդ դարի գուշակություններին վերաբերող մի ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 9599, էջ 192) տեսնում ենք թմրկահարի նկար, նա զղից կախված երկթաղանթ դողլի տիպի թմբուկը նվագում է երկու կողմից՝ փայտիկների հարվածով: Նկարի տակ զրված է տապլայպազ», այսինքն թմրկահար (նկ. 32. հ):

Ծնծղաները փողերի հետ միասին հիշատակում է Ար. Լատիվերտցին (11-րդ դար), բնութագրելով նրանց որպես ուրախության նվագարան:

Նա հիշելով տնկախիտ, պտղաբեր գեղեցկաշոք անցյալը սելցուկներից տուազ, հիշատակում է նաև ուրախության երգերը, փողերի և ծնծղաների նվագը, որոնք մարդկանց մեջ զվարճություն և բերկրանք էին առաջացնում⁴:

Այսպիսով, չնայած համեմատաբար սակագ, այնուամենալինի տարբեր ժամանակաշրջանների և տարբեր աղբյուրներից հայտնի որոշ նյութեր կան, որոնք աներկրայ են դարձնում հարվածային գործիքների տարբեր տեսակների գոյությունը հայերի մեջ, սկսած

¹ Փ. Բուղանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1831, էջ 232:

² Գր. Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 27:

³ Կ. Երզնկացի, Վենետիկ, 1905, էջ 131:

⁴ Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցիոյ, Վենետիկ, 1832, էջ 229:



ւ թ զ



Նկ. 27. ա) Հովհիկ սրբինդով, բ) Հովհիկ սրբինդով, գ) Հովհիկ սրբինդով,
դ) միմոս փողով, ե) փողհար ռազմիկ փողով և նիղակով, զ) փող-
հար և ռազմի տեսարան:

դեռևս հնագույն ժամանակներից, դրանք են՝ ծնծղա, դափ, միաթաղանթ թմբուկ, տապլ, լիտավլը, նաղարա, դհոլ:

Հայկական երաժշտության մեջ կարենոր դեր է խաղացել նաև փողն իր տարատեսակներով:

Ե. Լալալյանը 1906—1908 թթ. Ծովակ գլուղում, նախկինում՝ Զաղալու — Սևանա ճի հարավ-արևմտյան կողմում գամբարանալին պեղումների ժամանակ գտել է 17 սմ երկարությամբ մի եղջուր, (առաջին հազարամյակ մ. թ. ա.), որի ստորին ծալրի բացվածքը 3 սմ է և արտաքինից ունեցել է հաստրակ զարդարկեր: Եղջուրի միջի մասը կոտրված է: Ե. Լալալյանն այդ առարկան սրնդի տեղ է ընդունել: Սակայն գործիքի նյութը և ձեն ավելի հավանական են գարձնում նրա եղջերափող լինելը (նկ. 25.դ):

Հայաստանում եղջրափողերը համարյա անհշան փոփոխությունը պահպանվել են մինչև ուշ միջնադար: Այն մինչք հանդիպում ենք ինչպես Սասանյան ժամանակներին պատկանող սկառեղերի զարդանկարներում¹, այնպես էլ հայկական մանրանկարչության մեջ: 15—16-րդ դարերի Անգեղակոթի տապանաքարի վրա այլ գործիքների շարքում քանդակված է նաև երկիրդանի երաժշտական գործիք:

Փողի լավագույն օրինակներից մեջը մինք տեսնում ենք Գեղարդի ժայռափոր տաճարի վրա (13-րդ դար): Պատի ներսի երեսի վրա քանդակված է մի ուղղմիկ՝ ձախ ձեռքում նիզակ, իսկ աջոյի փող է փշում (նկ. 27.հ):

Ռազմական փողի հանդիպում ենք նաև Մշո Առաքելոց վանքի (1134) գուան շրջանակի վրա: Վերնայամի ուղմական տեսարանի կենտրոնում քանդակված է փողիարը, որը փեալի ձախ շրջված փշում է փողը, հենց նույն ուղղությամբ էլ սրարշավ ուղանում են ուղմիկները՝ զինված սրերով և գուրդերով: Փողհարից աջ քանդակված է ու Գեորգը (նկ. 27.զ):

Փողերը տարբեր առումներով հիշատակված են և մեր հին պատմիչների՝ Մ. Խորենացու, Փ. Բուղանդի, Ագաթանգեղոսի, Ա. Լաստիկերացու, Թ. Արծրունու, Գ. Մագիստրոսի գործերում:

Արտաշեսի թաղման կապակցությամբ Խորենացին գրում է, որ թափորի առջևից պղնձյա փողեր էին հնչեցնում, իսկ ետևից քայլում էին սկազգեստ ձայնարկու կուլսեր և լալկան կանալք:

«...Եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, և զկնիսն ձայ-

¹ И. А. Орбели и К. В. Тревер, Сасанидский металл, М-Л, 1935.



Ա



Ղ

Նկ. 28. ա) Գուսան սազատիպ գործիքով, բ) գուսան լարային
գործիքով, ղ) գուսան լարային զորֆիքով:

նարկու կուսանք սեազգեստք և աշխարող կանալք, և դհետ՝ բազմութիւն ռամկին»¹:

Նա հիշատակում է նաև, որ պատերազմի գնալիս նախ պղնձափողեր էին հնչեցնում, ապա զորքի ճակատն առաջ շարժում:

«Եւ Ամրատ հրամակիր զփողոն պղնձիս հնչեցուցանել և յառաջնալ զճակատն իւր, իրրե զարծիւ լերամ կաքաւոց խոյանալը»²:

Այսպիսով, Խորենացու վկալություններից պարզ երեսմ է, որ պղնձափողերն օգտագործել են թէ պատերազմի դնալիս և թէ թաղման ծիսակատարությունների ժամանակի:

Փակստոս Բուզանդը երաժշտական գործիքները, որոնց թվում և փողերը հիշատակում է խնջուլքի և թաղման ծեսերի առնչությամբ:

Այն խնջուլքի նկարագրաթյան ժամանակի, որտեղ սպանեցին Պապ թագավորին, Բուզանդը պատմում է, որ առաջին բաժակը Պապին մատոցելիս հնչեցրին թմրուկներն ու սրինգները, քնարներն ու փողերը իրենց ներգաշնակ ձայներով³:

Առանձնապես մեծ հետաքրքրություն է առաջացնում այն հատվածը⁴, որտեղ Բուզանդը պատմում է, որ ներսես կաթողիկոսի օրոք, որպես հեթանոսական կրոնից մնացած սովորությ հայ եկեղեցին արգելում էր մեռելների վրա լաց ու կոծ անելը, նվազելը, իսկ ներսեսի մահից հետո շարունակվեց մեռելներին փողերով, փանգիռներով, վիճներով ողբալը:

«Ապա յետ մահուան ներսիսի լարժամ զմեռեալսն լալին, փողովք և փանգոօք և զօօք զկոծն պարուցն կաքաւելով, զտիգսն հարեալս, զերեսս պատառեալս, արք և կանալք պղծութեամբ ճիւղութեամբ պարուք գեմ ընդ գեմ հարկանելով, և կամ ժակոս հարկանելով, զմեռվալսն հողարկէին»⁵:

Սա մի պարզ պացուց է նաև այն բանի, որ երաժշտական գործիքներով ողբալու սովորությը գալիս է շատ հնուց և որ երաժշտական գործիքները հայերի կինցաղի մեջ են մտել զեռես հնադույն ժամանակներում, քրիստոնեության մուտքից շատ առաջ:

Ագաթանգեղոսը գրում է, որ Տրդատ թագավորն իր ստվա-

¹ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 138:

² Նույն տեղում, էջ 122:

³ Փ. Բուզանգացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, էջ 232:

⁴ Նույն տեղում, էջ 229:



Նկ. 29. ա) Երաժիշտ սաղատիպ զործիքով,
բ) զուսան սաղով, զ) Երաժիշտ լարային զործիքով:

րաթիվ զորագունդը փողի ձախով և տագնապով էր թշնամու զեմ տանում:

«Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձախ փողի տագնապաւ յառաջ մատոցանէր մինչեւ յանդիման թշնամեացն»¹:

Իւզմական փողերի մասին հիշատակում է նաև Սեբեոսը: Նա խոսելով Պերողի դեմ Վահան սպարապետի ապստամբության մասին ասում է, — հնաց որ փողերի ձախը լսեցին Վահան սպարապետի և Պերողի զորքերը իրար վրա հարձակվեցին²: Մի այլ տեղ նա հիշում է չորս ձախանի փողի մասին, որը Խոսրով թագավորը նվիրում է մարզպան Արքատին պաշտամական պահակախմբի հետ միասին³:

Թովմա Արծրունու (10-րդ դար) վկալությամբ արար Բուղական զորավարի դեմ պատերազմի դնալիս հնչեցրել են և՛ փողեր և՛ քնարներ և՛ ջնարներ:

«Յայնժամ, հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ, և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զենու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն մինչեւ դրէթէ ի հիմանց զլեառնն տապալել, և հնան զզօրուն մինչեւ մերձ ի զլուխ լերիններ»⁴:

Միջնադարյան հայ բանաստեղծ Ֆրիկը (13—14-րդ դդ.) իր Դիվանում խոսում է գալարափողի մասին:

Այսպիսով նյութական և գրավոր տվյալներն ապացուցում են, որ սկսած մ.թ.ա. 1-ին հազարամյակից մինչեւ ուշ միջնադար, Հայաստանում տարածված են եղել փողերի տարբեր տեսակները (պղնձյա և եղջրափողեր, գալարափող, չորս ձախանի փող), որոնք լայն կիրառություն են ունեցել կենցաղում՝ ուազմի, որսի, խնջուքի, տոնախմբությունների, սպո ծիսակատարությունների և այլ արարողությունների ժամանակ:

Հայկական հնագույն երաժշտական գործիքներից է նաև սըրինգը:

Հայ շինականը գարեր շարունակ սընգով է արտահայտել իր հուլզերն ու ապրումները, ստեղծելով բազմապիսի հոգեզմալ մեղեդիներ:

¹ Ազաթանգեղայ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 33:

² История Епископа Себеоса, Ереван, 1939, стр. 27.

³ Там же, стр. 58.


⁴ Թ. Վ. Արծրունեայ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 296:



30.



Նկ. 30. ա) Երաժիշտ տառայպուլա լաբային գործիքով,
բ) Երաժիշտ քյամանչայով, գ) Երաժիշտ քանոն նվադելիս:



գ

Սրնգի ծագումը, սակայն, նույնպես մշտակած է պատմության թանձր քողով, նրա գոյությունը վկայող առաջին փաստը Գառնիում 1952 թ. Արեւլյան պարսպի մոտ, 4-րդ աշտարակի ներսից 2,5 մ խորությունից, անտիկ շերտից գտնված սրինգն է (նկ. 26. ա):


Սրինգը ոսկրից է: Բատ բնագետ Ռ. Ե. Գարբինյանի պատրաստված է բարձրասորունք ճահճալին թուչտնի, հավանաբար արագիլի կրնկաթաթից: Այն թերի է և գժվար է որոշել, թե նրա փշելու մասն ինչպիսին է եղել: Երկարությունը 13 սմ է: Ստորին մասում լայնանում է, բայց աննշան չափով: Վերին, փշելու մասի կտրվածքի արամագիծը 1,2 սմ է, իսկ ներքենը՝ 1,8 սմ: Սրնգի հարթ, տափակ մակերեսի վրա բացված են թվով 5 ձալնանցք, հինգերորդ անցքի առանցքով սրինգը կոտրված է: Անցքերը փոքր են, 0,04 սմ, և անհամաշխատ: Սրինգն իր ձևով և չափերով շատ մեծ նմանություն ունի Հայաստանի միջնադարյան հնավայրերից գտնված և հայկական մանրանկարներում եղած հովական սրինգներին:

Միջնադարյան հնավայրերի պեղումներից Հայաստանում հայտնաբերվել են չորս փողալին գործիք և մեկ չութակահարի նկար՝ ապակի սրվակի վրա:

Սրինգներից մեկը գտնվել է Դվինում, 1949 թ. միջնաբերդի պեղումների ժամանակ¹, սա ևս պատրաստված է արագիլի կրնկաթաթի սնամեջ ոսկրից, երկարությունը 25,4 սմ է, ունի 5 անցք, որոնք անկանոն են արված: Վերին, փշելու ծալլից մինչև առաջին ձայնանցքը, երկարությունը 15,5 սմ է: Վերին մասում սրինգի արամագիծը 1,2 սմ է, իսկ ներքենի մասում՝ 1,9 սմ, տարբերությունը 0,7 սմ է (նկ. 26. գ):

Վերին՝ փշելու մասը չնայած կոտրված է, մի փոքր մասը պահպանվել է, որից պարզ երևում է, որ սրինգն ավարտված է և շարունակություն չի ունեցել: Համոզված կարելի է ասել, որ դա սրինգի ընական մեծությունն է: Պարզ երևում է, որ վերեկի մասում, արտաքին մակերեսի վրա փշելու անցք չի ունեցել: Մերկարժիքով չի ունեցել և լեզվակ, այն նվազել նն ալնպես, ինչպես այժմ հովիմներն են նվազում լեզվակ չունեցող սրինգները մի փոքր թեք բանելով:

¹ Ա. Պաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 72:



Նկ. 31. ա) երաժիշտ տավիդ նվագելիս,
բ) երաժիշտ լարային դործեցով, գ) քնար:

Մեր այս հնթագրությունն ապացուցվեց Մցխեթում հովվի դամբարանում գտնված սրինգով։ Սրինգն ամբողջական է, պատրաստված է կարապի ոսկրից։ Փչելու մասն աննշաս է և վերջանում է ուղիղ, վերեկի մասում չունի ձայն արտաքերելու համար անցք կամ լեզվակի. այն ևս նվազել են մի փոքր թեք բռնելով։ Մցխեթում գտնված սրինգը պատկանում մ.թ.ա. 14-րդ դարին։ Նա ունի երեք ձայնանցք, ի տարրերություն մեր հին և միջնադարյան սրինգների, որոնք ունեն 5 անցք։

Նույնպիսի մի սրինգ էլ գտնվել է Գառնիում 1955 թ. ամրոցի պեղումների ժամանակ 0,9 սմ խորությունից (նկ. 26. բ) թերի է, երկարությունը 17,6 սմ, վերեկի ծալրի տրամագիծը 1,3 սմ, ցածինը՝ 1,5 սմ։ Պատրաստված է նույնպես թուչունի ոսկրից։ Ցածի մասում պահպանվել է երեք անցք, երրորդը թերի։ Պարզ է, որ սա էլ 5 անցք է ունեցել, անցքերը բացված են ոսկրի լայն և տափակ մասում, նույնպես անհամաչափ են արված։ Դվինում և Գառնիում գտնված սրինգները, համեմատած Գառնիում անտիկ շերտից գտնված սրինգի հետ, ծավալով մեծ են, ավելի կոպիտ, ոսկրն ավելի ամուր, հաստ, անցքերի տրամագիծն ավելի մեծ։ Ներկայիս հովվական սրինգների հետ համեմատած ավելի փոքր են, 7 անցքի փոխարեն ունենք 5 անցք, որի շնորհիվ ձայնի գիտապազոնն էլ ավելի փոքր է։ Պատրաստված են թուչունի կրնկաթաթի ոսկրից, իսկ հիմա պատրաստում են հոնի կամ տանձի փայտից։ Անցքերն անհամաչափ են բացված, որն անշուշտ կաղդեր ձայնի մաքրության վրա։ Անցքերը տեղավորված են գործիքի ցածի մասում, վերջավորության մոտ հակառակ ներկայիս սրինգների, որոնք ավելի միջամատում են գտնվում։ Պարզ է, որ սա կարող էր ձայնի տեմբերը որոշ չափով փոխել։

Դվինում 1949 թ. միջնաբերդի պեղումների ժամանակ գտընվել է նաև փողալին մի փոքրիկ գործիք, նույնպես ոսկրից¹, բայց թերի է երկու կողմեր, այդ պատճառով ոչինչ չի կարելի տսել նրա մեծության և փշելու հարմարանքի մասին։ Պահպանված մասի երկարությունը 7,4 սմ է, ունի 3 անցք, որոնցից մեկը թերի (նկ. 26. ե)։

Հովվական սրինգի օրինակներ մենք տեսնում ենք և հայկական մանրանկարներում, ինչպես Պետական Մատենադարանում պահպող 1304 թ. Նախիջեանի (Ճեռագիր № 3722, էջ 177ա)

¹ Կ. Ղաֆարարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 73.



Նկ. 32. ա) Դափ նվագող պլարուհի, բ) լարային և փողային
զորձիքների կվարտետ, գ) նողարա, դ) թմրկահար,
ե) փողային և լարային զորձիքների նվազախռումը:

և 1322 թ. Գլածորի ձեռագրում (№ 1275): Այս սրինգները գեղից ցած մի փոքր լայնանում են, որոշ չափով մոտենալով փողին: Բայց, ինչպիս տեսանք, պեղումներից հարտնաբերված սրինգները մեծ մասամբ թուզունի ուսկրից են պատրաստված, ուստի ընական նյութից. պատրաստվելով կարող էր և փողը գեղից ցած մի փոքր լայնանալ: Բացի արդ պարզ նկարված է հովիճը իր հովվական մահակով, ոչխարներն էլ լեզուները հանած ուկնդրելիս: Դժվար թե հովիվը ոչխարների համար փող նվազեր և վերջապես չէ որ մանրանկարները գործիքների սիմվոլիկ պատկերումներն են և կարող են մի փոքր ձեւափոխված լինել:

Հովվական սրինգի մենք հանդիպում ենք նաև Երտասաղեմի 15-րդ դարի ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 1973) և 1419 թ. № 2670 ձեռագրում, 16-րդ դարի՝ № 6325 ձեռագրում և այլն:

Դեպի ցած լայնացող փողեր պատկերված են միջնադարյան մի շարք ձեռագրներում (Մատենադարանի ձեռագիր № 999, 5472), (նկ. 27.դ) ուղղմական փողեր պատկերված են Մատենադարանի 1619 թ. ձեռագրում (№ 351):

Այսպիսով մանրանկարներում մենք հանդիպում ենք փողալին գործիքների, հովվական սրինգի, և շեփորի (ուազմական փողի):

Մեզ մոտ սրինգի գոյաթլանը վկայող առաջին գրավոր տեղեկաթլանները վերաբերում են վաղ միջնադարին:

Պապ թագավորի սպանությանը նախորդած խնջութիւնը նույն նկարագրության մեջ, Փ. Բուզանդը, մի շարք գործիքների թվում, հիշում է նաև սրինգը¹:

Սրնգի մասին հիշատակություններ ունեն նաև Գր. Նարեկացին², թ. Արծրունին³, Գր. Մագիստրոսը:

Գր. Նարեկացին (20-րդ դ.) աղելարմար ջութակաց, «Բարացուցական բամբուան» շարքում նշում է և մի նոր տեսակի սրինգ, որը, նրա վկայությամբ, գործածության է դրվել քրիստոնեության կողմից մերժված հնի տեղը: Այս նոր սրինգն արգեն, ինչպես նշում է Նարեկացին հեթանոսական հնչյուններ չուներ, որոնց միշտցով սուտ բաները ճշմարիտի կերպարանքով էին հանդես գալիս, ուստի և տերը մարգարեի բներանով մերժում է հին սրինգը, սի-

¹ Փ. Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, էջ 232:

² «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 478:

³ Թ. Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, գոլր. 4-րդ ժ. էջ 296:



Նկ. 33. Տապանաքար երաժշտական դռթձիքներով:

ըելով և պատվելով նորը, որպես դեերի և բոլոր չար պատահարների դեմ ահարկու զորություն:

«...որինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեղ՝ ընդ հնոյն փոխանորդութիւր, ո՛չ նեթանոսօրէն ուրուածախն հնշման, և կամ հրէաբար խակախորհութե, զոր մարդարէն տերամք ազդեցոլց՝ ի բա'ց արա լինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տաժմամբ՝ ահարկու դիւաց և ամենալին չար պատահարաց»¹,

Այսպիսով, քրիստոնեական եկեղեցին հեթանոսությունից եկած սրինգն ընդունում է որպես նոր գործիք, որը պետք է ծառալեր քրիստոնեական եկեղեցուն, նրա հավատի ամրապնդմանը:

Դվինում, բացի վերը հիշած գործիքներից, գտնվել է պարկապուկի ծալը և ապակե սրվակ ջութակահարի պատկերով (նկ. 26 ե,զ):

Սրվակը կապուլտ է ոսկեդրվագ նախշերով, վրան նկարված են բաղանման թուշուններ, մարդարտածաղիկներ, և մեղալիոններ, որոնց ներսի փոքր շրջանակներում նկարված են կենդանիների և մարդկանց պատկերներ:

Մեղալիոններից մեկում գորգի վրա նստած ջութակահարը նվազում է: Զութակն ունի 4 ականջներ, չնայած կոթունի (գրիֆի) վրա նշմարդում են երեք լարեր: Սրվակն ուսումնասիրել է Հռ. Զանփոլադյանը և նրա կարծիքով, այն բյուզանդական ծագում ունի և պատկանում է 11-րդ դարին²:

Զութակի մասին միակ գրավոր հիշատակությունը գտնում ենք Գր. Նարեկացու մոտ՝ 10-րդ դարում³:

Զութակին վերաբերող Նարեկացու տողերը տարբեր կերպ են մեկնաբանվել: Ոմանք գտնում են, որ նրա հիշատակած «աղէյարմար» ջութակը լարալին գործիք է, ոմանք էլ գա բացատրում են որպես քնարի ականջներ⁴, որոնցով լարերը ձգում կամ թուլացնում էին, որիհներն էլ կարծելով, որ ջութակը աղելաբերով կազմված նվագարան է, միաժամանակ ենթադրում են, որ ջութակի վրա նվագել են աշխարհիկ խրախճանքների ժամանակ⁵: Սակայն

¹ «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 478:

² Краткие сообщения ИИМК, № 60, Москва, 1955, стр. 120.

³ «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 478:

⁴ Հ. Նալբան, Մեկնութիւն աղօթից, Կ. Պոլիս 1745, էջ 716:

⁵ «Նարեկ աղօթից», Հ. Գ. Ավետիքյանի համառու բացատրությունը, Վենետիկ, 1927, էջ 488:

հետազոտաթիւնները ցուց են տալիս, որ աղեհարմար ջութակի տակ նարեկացին նկատի ունի ոչ թե քնարի ականջները, այլ հենց ջութակ դործիքը:

«Սկզբնապար նախընթացաթե աղեկարմար ջութակաց՝ բարետաւիդ ողբերգարկութեանց՝ բարացուցական բամբուան բառացի բարառնութեց»¹:

Հեղինակը կոչնակի ձայնը համարելով պարագլուխ մլուս բոլոր նվագարանների ձայնների նկատմամբ, ինչպես՝ քաղցրանվագ աղեհարմար ջութակների, այնպես էլ ճարտար բամբիոնների և այլն, դրանով իսկ նա դրանք ներկայացնում է որպես առանձին դործիքներ:

Եթե այս հնթագրությունը ճիշտ է, ապա ճիշտ է նաև այն, որ ջութակը հայ ժողովրդի մեջ է մտել առնվազն 10-րդ դարում:

Բավական հետաքրքիր տվյալներ կան և այլ լարային գործիքների վիրաբերյալ:

Լարային գործիքը մեծ մասամբ գուսանների, մարուանների, ավելի ուշ՝ աշողների գործիք է եղել:

Քանի որ նրանք բոլորն էլ միաժամանակ թե պատմում, երգում, և թե նվագում էին, բնականաբար՝ փողալին գործիք օգտագործել չէին կարող, ուստի նրանց պետք էր երդին ընկերակցող լարային գործիք:

Մ. Խորենացին բազմիցս հիշատակում է բամբիոը, որպես գուսանների գործիք: Նա ասում է՝ բամբիոի վրա նվագելով, արամյան ազգի ծերտնիները պատմում էին հայերի սխրագործությունների մասին, հայ քաջ թագավորների գովքն անում:

«Բայց առաւել լաճախագոյն հինքն արամազնեաց ի նուագս բամբուան և լերգս ցցոց և պարուց զալսոսիկ ասեն լիշտակակօք»²:

Խորենացին խոսելով Տիգրան թագավորի գործերի մասին, գովերգելով նրա արտաքինը ասում է՝

«...զորմէ ասէին ի հինսն մեր, որք բամբուամբն երգէին, լինել ամա և ի ցանկութիւնս մարմնոյն չափավոր. մեծիմաստն և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի»³:

Բամբիոն տեսել և լսել են նաև 10—11-րդ դարերում Հովհ. կաթողիկոսը, Գր. Մագիստրոսը և, ինչպես վերը տեսանք, նաև Գր. Նարեկացին:

¹ «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 478:

² Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 17:

³ Նույն տեղում, էջ 50:

Ամանք բամբիոն ռբամբ» խոսքի հետ կապելով, կարծել են, թե այն ծնծղալ է:

Սակայն ոչ մի կասկած չի կարող լինել, որ այն լարալին գործիք է եղել Եվ աճա թե ինչու.—Հովհ. կաթողիկոսը ասում է, որ բամբիոն «կտնտցահար, աղերախ»² գործիք է: Մ. Աբեղյանը, չկասկածելով բամբիոնի լարալին գործիք լինելու վրա, նրա տարատեսակներն է համարում «բանդիոն» և «փանդիոն»³:

Փանդիոն գեռես 5-րդ դարում հիշատակում է Փ. Բուզանդը՝ կապված թաղման ծիսակատարության նկարագրության հետ⁴: Բացի այդ, փանդիոնի հետաքրքիր նկարագրությունն ենք գտնում Մատենադարանում պահպող 1377 թ. մի ձեռագրում, որտեղ տափում է, որ եթե փանդիոնի լարերը ձգված չեն, ձայն չի հանում, իսկ երբ ձգում են և բախում՝ նա հնչում է: Ապա հետեւալ համեմատությունն է արգում փանդիոնի և մարդու քերանի միջև՝ քերանը փանդիոն է, իսկ օդը՝ լարերը, քիմքը էշը (հենակը), լեզուն՝ կտնտց, ատամները՝ կոթունը (գրիֆը), իսկ շրթունքները՝ որպես մատներ, որոնք երբ կոթունի, ալսինքն՝ ատամների վրա խաղում են, ձայնը հոգավորում և խոսք են հորինում (Մատենադարանի ձեռագիր № 2490, էջ 190):

Փաստորեն այստեղ խոսվում է փանդիոնի կառացվածքի մասին և պարզվում է, որ նա լարալին գործիք է և ունի կոթան, հենակ և նվազել են կտնտցով: Նվազելու համար հարկավոր է լարերը ձգել և բախել:

Ինչպես վերը տեսանք, Հովհաննես կաթողիկոսի հիշատակած բամբիոնը նույնական կտնտցահար, աղերախ գործիք է, ուստի եթե բամբիոն ու փանդիոնը նույնն են, ապա նրա մասին հիշատակությունը հասնում է մինչև 14-րդ դարը:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում 15-րդ դարի մատենադարանի 6325 ձեռագրի մանրանկարում գուսանի նկարը լարալին գործիք նվազելիս: Գործիքը շատ է տարբերվում մյուս մանրանկարներում եղած լարալին գործիքներից: Դեկան և գրիֆը մի ամբողջություն է կազմում, ունի 6 ականց՝ նկարված գրիֆի վրա:

¹ Մ. Քաջունի, Բառդիրք արուեստից, Վենետիկ, 1891, էջ 618:

² «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի ամ. հայոց», Երուսաղեմ, 1843, էջ 14:

³ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Վազգատ, 1899, էջ 26:

⁴ Փ. Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, գլ. 15, էջ 229:

Գործիքի դլուխը կիսաշրջան է կազմում: Մեղ թվում է, որ այս գործիքը կարող է բամբիռն (փանդիռն) լինել:

Մեր մատենագիրների մոտ հետաքրքիր ավլալներ են պահպանվել նաև մի այլ լարալին գործիքի՝ «Ճնարի» մասին:

Մ. Խորենացին հիշատակում է «Ճնարահար քաջամատն կնոջ» մասին: Նա ասում է, որ խնջուկքի ժամանակ Խոսրով Դարդմանացին դիմով հարբած հետառուտ է լինում մի կնոջ, որը վարժ մատներով չնար էր նվազում:

«Դարձեալ երբեմն ի խնջույն ուրախութեան Խոսրով գարդմանացի ի գինուզ դեղինեալ առաջի Շապիոր, զօրէն սեղեխի տուխեցելով գինու չնարահար քաջամատն կնոջ կրթէրա»¹:

Գր. Մագիստրոսը իր թղթերում Բագրատունյաց Աշոտ իշխանի որդուն գրում է, որ Ծառում լալկան չնարահարները խումբ կազմած, քաջի գովքն էին բորբոքում:

Նա ասում է.

«Ապ' եթէ վարդպապետն քո ծալրագոյն, ի Ծար ծարաւի ծորեալ, իքէն ջերմուկն ջալիկը ջոկ կապեալ չնարոհարացդ, ջատագով քաջին ջեռուցանէն...»²

Գր. Նարեկացին չնարը հիշատակում է տարբեր առիթներով: Մի տեղ նա հիշում է «Ճնար ջահաւորական»³, որը ըստ Հ. Նալյանի մեկության՝ Դավիթի տավիղն է⁴ (10 լարանի) լուսատու և դիվահալած: Մի այլ տեղ Նարեկացին օգտագործում է «Ճնարահար պոռնիկ» գարձակածքը, որոնք երգող և նվագող կանալք էին:

Ճնարը, քնարի և փողի հետ նվագել են նաև պատերազմի գնալիս, որի մասին վկալում է Թովման Արծրունին արար զբար Բուղալի հետ պատերազմելու կապակցությամբ⁵:

Ոմանք ջնարը նույնացնում են քնարի հետ: Բայց ինչպես Թ. Արծրունին, ախալքս էլ Գր. Նարեկացին և այլք, ջնարը և քնարը թվում են կողք-կողքի, մի բան, որն անհմաստ կլիներ, եթե դրանք նույնը լինեին:

Քնարների և փողերի մասին հիշատակություն կա նաև 13—14-րդ դարերում Հովհ. Երգնկացու ճառերից մեկում:

¹ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 250:

² Գր. Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 209—210:

³ «Նարեկ Աղօթից», Վենետիկ, 1827, էջ 479:

⁴ Հ. Նալյան. Մեկնարախութիւն աղօթից, Կ. Պոլիս, 1745, էջ 716:

⁵ Թ. Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունիաց, Թէֆլիս, 1917,

1322թ. (Մատենադար. № 732 ձեռագիր) խոսվում է այն մասին, որ քնարի և թմբուկի աղիքը խոնավանալիս ախորժելի ձայն չեն հանում:

Քնարի և քնարատիպ գործիքների մենք հանդիպում ենք նաև միջնադարյան ձեռագրերում: Այսպես, Սարգիս Պիծտիկի նկարած 14-րդ դարի մատենադարանի մի ձեռագրում և 1269թ. ձեռագրերից մեկում, որոնց մեջ նկարված է Դավիթ թագավորը տափիդ նվազելիս և ալլն (նկ. 31.բ):

Քնարի բարձրագանդակի հանդիպում ենք նաև Անդեղակոթի մի տապանաքարի վրա (որտեղ քանդակիված են նաև քամմանչան իրեն աղեղով, երկիողանին, սազի տեսակներ և ալլն): Քնարատիպ գործիքի քամմանչալի և սազի հանդիպում ենք և 17-րդ դարի Դարանլուղ (Մարտունու շրջան) տապանաքարերից մեկի վրա:

Մրանցից բացի, միջնադարյան տաղերում հիշատակություն կա նաև մեզ անհայտ մի լարալին գործիքի մասին, որ կոչվել է «չաշտառ»: Ենթագրվում է, որ 6 լարանի շութակի տիպի գործիք պետք է եղած լինի¹:

Չաշտան հիշատակվում է 14-րդ դարի տաղերդու կ. Երզնկացու մոտ՝

Մըտրուալ գու սազէ զչաշտան
Որ մուրճըն խաղալ մոյտան
Ալ մուրճ ու բարակ երկան
Քո տեսն է լուսին նըման²:

17-րդ դարի ձեռագրերից մեկում, մի բանաստեղծության մեջ, ասվում է, որ մտրուաները չաշտառ են շինում և լարը կապում վրան՝

Չաշտալ կու շինեն մտրուալքն
Ու կապեն ըզլարն ի վերալ
Դու յե՞ր գողացար զայն լարն,
Որ յափիդ մեզն կերենալ...³

¹ Հր. Անառյան, Հայերեն արմատական բառարան, Ե. Հատոր, Երևան, 1931, էջ 728:

² Կ. Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր քերթ-գածները, Երատ. Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905, էջ 175:

³ Մատենադարան, ձեռագիր № 9330, էջ 156 բ:

Չաշտայի, որպես լարային գործիքի գոյությունը հաստատելոց բացի, այս տողերը հետաքրքիր են նաև մի ալ տեսակետից։ Դրանցում եղած ուղղակի վկալությունները խոսում են այն մասին, որ երաժիշտնվագող մարուաները, նույն գործիք պատրաստող արհեստավորներն են եղել։

Այսպես կոչված «Անիի երազահանում» որը արաբերենից աղատ թարգմանությամբ հայերենի է փոխադրվել 1222 թ., Անիի մոռ գտնվող Մաղասրերդում, զանազան արհեստավորների շարքում հիշատակվում են նաև՝ «դրամարկղն և փողպարկն, պկազարկն տօպազպարկն և ալին», որոնք երաժիշտներ են եղել¹։

Երաժշտական գործիքների մասին հիշատակություններ ունենք նաև 16—17-րդ դարերի Վենետիկի Մխիթարյանների հրատարակած ձեռադրերից մեկում, որտեղ հիշատակվում է 4 գործիքի անուն, ընար, սալիքի, դաճոն, արդաճոն, ապա խոսվում է թե լուրաքանչուրը քանի լար ունի, նրանց լարելու անհրաժեշտության և նվազի ներգործության մասին մարդկանց վրա և ապա նրանցով հիվանդներին բռնելու մասին։

12-րդ դարի հայ թժիշկ Մխիթար Հերացին իր «Զերմանց մխիթարութիւն» գրքում առաջարկում է հոգսի և տրտմության պատճառով առաջացած հիվանդությունները բռնել գործիքների վրա նվազելով, խաղով, պարով²։

Նվազն ազգել է ոչ միայն մարդկային հոգու, ալլ նույնիսկ կենդանիների վրա։ Հայտնի է, հովվական սրնդի նվազի նշանակությունը հոտի ղեկավարման գործում, և որպես դրա ընդհանրացում՝ սիրահար հովիվ Հասովի հայութ քրդական հանրածանոթ լեռների³։

Զնալած գործիքների անունների այս կարեռը հիշատակություններին, մենք գերախտաբար կառուցվածքի և ձեխ մասին շատ քիչ գրավոր հիշատակություններ ունենք, որոնցով հնարավոր չէ որոշել նրանց ձեզ, կամ համեմատելով գտնել թե ալժմյան որ գործիքին է նման։

Հայկական մանրանկարներում ունենք պահպանված նաև այնպիսի լարային գործիքներ, որոնց մասին պատմիչների գործերում հիշատակություններ չկան։

Զնալած մանրանկարներում պահպանված գործիքների, նկարները մեծ մասամբ նրանց սիմվոլիկ պատկերներն են և կարող են

¹ Մատենադարան, ձեռագիր № 695, էջ 219 թ և 220։

² Մ. Հերացի, Զերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 19։

որոշ մանրամասնություններում աղավաղվոտ լինել, բայց այսու-
ամենայնիվ պահպանել են գործիքների հիմնական ձևերը:

Մանրանկարներում ունենք լարալին գործիքների հետեւալ
տեսակները՝ քնարատիպ զործիքներ, տափիդ, քանոն, սազի ըն-
տանիքին պատկանող գործիքներ, քյամանչա, ուղի տիպի գոր-
ծիքներ և այլն:

Այս լարալին գործիքներից ամենահինը 1211 թ. Հախաղատի
ձեռագրում ծաղկող մարդարեի նկարած սազն է (Մատենադարանի
ձեռագիր № 6288, էջ 15): Նկարը գործիքի մասում մաշված է:
Աղոտ է հատկապես գրիֆի և ականջների մասը: Գլխի մասը դեպի
ներքե թեքվելով կիսաշրջան է կազմում, որի վրա հազիվ նշմար-
վում են չորս ականջներ, գործիքի վրա շատ լավ երևում են երա-
ժրշափի մատները: Երաժշտական գործիքը բռնել է հորիզոնական
դիրքով:

14-րդ դարում ունենք սազատիպ երկու գործիք, երկուսն էլ
«Ե» գլխատառի նման, մեկը 1318 թ. (Մատենադարանի ձեռագիր
№ 206, էջ 260 ա) Թորոս Տարոնացու ավետարանի մեջ է (նկ. 28.
բ, դ): Ունի տանձաձեւ իրան, գործիքի վրա նշմարվում են 4 լար,
ականջներ չկան, նվազողը գործիքը պահել է հորիզոնական գիր-
քով: Երաժիշտը նկարված է նվազելու ժամանակի: Նա ձախ ձեռքի
մատները սեղմել է լարերի վրա, իսկ աջով լարերն է հնչեցնում:
Դործիքի տանձաձեւ մարմնի վրա, երեսում են երեք թեքելով կիսաշրջան
են կազմում և վերջանում սուր երկար ծալրով:

Մյուս գլխատառ «Ե»-ն կազմող գործիքը կիլիլան 1314 թ.
Աստվածաշնչում Ծաղկաղ Ավագի նկարն է (Մատենադարանի ձե-
ռագիր № 62, էջ 259), նույնպես սազանման է, բայց կլոր է, ունի
երկու անցք, ականջներն արված են ոչ թե գլխի վրա, այլ գրիֆի:
Պարզ նկարված են 4 ականջներ, երաժիշտը գործիքը բռնել է
նույնպես հորիզոնական դիրքով:

Մի նոր, բոլորովին այլ ձեխ սազի հանդիպում ենք 1461 թ.
ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 3884, էջ 85 ա): Սա
իր տիպով շատ նման է 15—16-րդ դարերում տապանաքարերի
վրա հանդիպող փոքր տիպի սազի, որի բերանը լրիվ տանձաձեւ
է, գրիֆը բարակ և վերջավորաթյունը գրեթե ուղիղ, առանց կի-
սաշրջան կազմելու, միայն թե բնական ձևով մի փոքր թեքվում
է դեպի վեր: Նրա վրա պարզ երեսում են հինգ ականջներ, ալմանե
երաժիշտը գործիքը բռնել է ոչ թե հորիզոնական, այլ դեպի վեր

մի փոքր թեքած: Նվարի տակ գրված արձանադրությունից պարզվում է, որ ցուլի վրա նստած է Զոհրան, որը կոչված է լուսարիր (նկ. 29.ա): Մենք այս նույն Զոհրա լուսաբերին հանդիպում ենք նաև 17-րդ դարի մի այլ ձեռագրում, որտեղ նա նստած է ուղարի վրա և նվազում է «տառապալա» կոչվող գործիքը: Այս ոլումեն կապված է երկնալին լուսատաներից՝ Արուսյակի խորհրդանիշի հետ:

Սաղի մենք հանդիպում ենք նաև Վեդու շրջանի Զնջոլու զլադի, Բասարգեցարի, Բնունիսի, Անդեղակոթի, Դարանլուղի կենցաղալին պատկերաքանդակներ ունեցող տապանաքարերի վրա:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում և Աղեքսանդր Մակեդոնացու վարքում եղած լարաին գործիքը (Մատենադարանի ձեռագիր № 5472, էջ 18, 17-րդ դար): Երաժիշտը նստած է նստարանին և նվազում է: Գործիքն ունի երեք մեծ ականջ և բազմաթիվ մանր ականջներ (նկ. 29.դ): Աս հավանաբար Վին գործիքն է, որի մասին հիշապակում է Փավստոս Բուզանդը¹:

Ինչպես տեսանք 17-րդ դարի գուշակությունների ձեռագրում (Մատենադարանի № 9599, էջ 64) Զոհրա լուսաբերը ուղարի վրա նստած «տառապուլա» կոչված գործիքն է նվազում (նկ. 30.ա):

Ինավ չենթագրելով, որ տառապուլան կարող է երաժշտական գործիքի անուն լինել, պրոֆեսոր Հ. Աճառյանը իր «Արմատական բառարան»-ում հենալիլով այլ տվյալների վրա փորձում է տառապուլ բառը ստուգաբաննել որպես ալրող նյութի անվանում:

Պրոֆեսոր Հ. Աճառյանը նկատի է անեցել Ա. Զոպանյանի «Հայոց էջերում» ժողովածուի մի տաղը, ուր ասված է «թող զիս ալրեն տառապուլով, որ իմ սրտի բոցը գոռած»²: Այս հատվածից դժվար չէ կոահել, որ այսահեղ խոսքը տառապուլայի նվազով հոգին հուզելու, սիրան ալրելու մասին է և ոչ թե ֆիզիկական ալրվածք պատճառելու:

Միջնադարյան ձեռագրերից մեկում մենք հանդիպում ենք նաև քյամանչայի (15-րդ դար), քանոնի՝ (17-րդ դար, մատենադարանի ձեռագիր № 7090, էջ 5):

Ունենք նաև տավիղի և քնարատիպ գործիքների մանրանը-կարներ: Օրինակ 14-րդ դարի ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 2627) ծաղկող Սարգիս Պիծակը Դավիթ թագավորին պատկերում է տավիղ նվազելիս. այն գրված է Երգնկա քաղաքում

¹ Փ. Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, էջ 229:

² Հր. Աճառյան, Արմատական բառարան, Երևան, 1931, համ. 5, էջ 800:

1269 թ.: 1619 թ. ձեռագրում (*Մատենագարանի ձեռագիր № 351 էջ 291 բ և 554 ա*), պատկերվում է քնարի մի ալ տիպը:

Հնարավոր ուղղակի և անուղղակի աղբյուրներից քաղած նյութերից քննարկմամբ, անվիճելիորեն ապացուցվում է երաժշտական մի շարք, ըստ որում թե փողակին, թե լարային և թե հարվածային նվազարանների գործությունը հայերի մեջ, որոնք օգտագործվել են ամենաբազմազան առիթներով:

Հենց այս նկատառումով քննելով հարցը, մեզ թվում է, որ նյութերը բավականաչափ համոզեցուցիչ են պնդելու, որ հայ ժողովուրդը սկսած զենքս ամենավաղ ժամանակներից, ունեցել է իր հույզերն ու ապրումները երաժշտության միջոցով արտահայտելու անհրաժեշտ երաժշտական գործիքներ՝ որոնց սիստեմատիկ և բազմակողմանի տևումնախրությունը մի արժեքավոր ներդրում կլինի մեր բազմագարյան հարուստ մշակովի գանձարանում:

ЭММА ХАНЗАДЯН

ДРЕВНЕАРМЯНСКИЕ МУЗЫКАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ

(Р е з ю м е)

История армянских музыкальных инструментов, насчитывающая несколько тысячелетий, является столь же древней, как и история искусств.

К сожалению, данных, относящихся к древнейшим армянским музыкальным инструментам, сохранилось немного.

Обнаруженные в Армении древнейшие инструменты принадлежат к шумовой группе ударных инструментов. Это — колокольчики, бубенцы, погремушки (II тысячелетие до н. э.).

Во время раскопок Кармир-блура, в 1948 г., найдена пара бронзовых кимвалов VII века до н. э. Эти кимвалы немногим отличаются от современных, но только они меньше и разнятся пропорциями отдельных частей.

По сравнению с другими инструментами, ударные недалеко ушли от своих прототипов. Найденные во время раскопок в Армении горшки в виде полушиара и глиняные однородные воронкообразные полые сосуды бронзового века возможно были барабанами.

Изображения ударных инструментов встречаются в армянских рукописях XIII—XVII вв. (дан, литавр, дахра, дхол, нагара и др.).

Ценные сведения о музыкальных инструментах древней Армении дают армянские матенагири.

У Ф. Бузанда (V в.) и у Гр. Магистроса (X в.) сохранились данные о тмбуке (барабан).

С „тапл“-ом (барабан с двумя перепонками) мы встречаемся у Ерзинаки (XIV в.) и в рукописи XVII в.

У Ластивертци (XI в.) сохранились данные о ցնչա (кимвал) и о պօխէ (труба).

Таким образом, есть определенные, хотя и немногочисленные, материалы, известные из разных источников и относящиеся к различным эпохам. Эти материалы подтверждают существование разных видов ударных инструментов у армян, начиная с древнейших времен.

В армянской музыкальной культуре значительное место отведено и духовым инструментам.

Рог из раскопок могильников села Цовак (Загалу, северо-западное побережье оз. Севан) Е. Лалаян называет срингом (свирель). Возможно, что речь идет о егджрапохе (рожок).

В Армении рожки без особых изменений сохранились до позднего средневековья.

Изображения рожков мы встречаем как на архитектурных памятниках (на стене Гегардского монастыря XIII в., на верхней части двери церкви Аракелоц в Муше, XII в.), так и в памятниках армянской миниатюры.

О похе (трубе) по различным поводам вспоминают историки М. Хоренаци, Ф. Бузанд, Агатангехос, Ластивертци, Т. Арцруни, Гр. Магистрос, Себеос.

Материальные и письменные данные удостоверяют, что, начиная с I тысячелетия до н. э. и до позднего средневековья, в Армении были распространены разные виды труб, широко распространенные в быту: при охоте, военных действиях, пиршествах, празднествах, погребальных обрядах и т. п.

Среди древнеармянских музыкальных инструментов

имеется сринг (свирель), обнаруженный при раскопках Двина и Гарни. По сравнению с современными пастушьими свирелями сринг меньше, вместо семи отверстий имеет пять, вследствие чего и диапазон их у'же.

Средневековые свирели изготавливались из бердовой кости птицы, в то время как материалом для современных свирелей служит кизиловое или грушевое дерево.

Древнейшие изображения пастушей свирели мы находим и в памятниках книжной живописи: в Нахичеванской (XIV в.), Гладзорской (XIV в.), Иерусалимской (XV в.) и др.

Письменные данные о свирели мы находим у Ф. Бузанда (V в.), Гр. Магистроса (Х—XI в.), Т. Арцруни (XI в.) и Гр. Нарекаци (X в.).

Большой интерес представляет изображение скрипача на стеклянном флаконе, обнаруженному во время раскопок вышгорода Двина. Флакон этот датируется XI в. и имеет византийское происхождение.

О джутаке (скрипке) есть упоминание и у Гр. Нарекаци, причем оно вызывает различные толкования. Одни считают джутак колышками кнара (арфы), другие—скрипкой. Последнее толкование нам кажется более вероятным.

Сохранились интересные данные и о других струнных инструментах, которые употреблялись частью гусанами, мтурлами и ашугами.

Об инструменте *бамбирне* многократно упоминает М. Хоренаци. Бамбирн видели и слышали в X—XI вв. Гр. Магистрос, Гр. Нарекаци и Иоганнес Католикос.

Некоторые, связывая слово бамбирн со словом „бамб“ (басовый), толкуют его как кимвал. Но Ованнес Католикос называет бамбирн щипковым, струнным инструментом.

„Вандирн“, „пандирн“ М. Абегян считает разновидностями бамбирна. Упоминание о пандирне мы находим также у Ф. Бузанда и в рукописи 1377 г. Нам кажется, что и инструмент, изображенный в рукописи XV в. (хранящейся в Матенадаране), является бамбирном — пандирном.

Упоминание о другом струнном инструменте — *джнагре* — мы находим у Гр. Магистроса, Гр. Нарекаци, Т. Арцруни.

В средневековых песнях упоминается также шестиструнный инструмент чашта, который мастерили сами певцы-исполнители Мтрупи.

В так называемом „Анийском толкователе слов“ 1222 г. в числе прочих ремесленников упоминаются музыканты — „драмзарк“, „похзарк“, „պկազարк“, „տոպզարк“.

В армянских миниатюрах большой интерес представляет изображение струнных инструментов: тавига (лиры), кнара (арфы), канона, кяманчи и саза.

Изображения инструмента типа саз встречаются в Ахпатском евангелии XIII в., в миниатюрах XIV в. Они встречаются и на надгробиях Ангегакота, Басаргечара, Караплуха, Бнуниса и др.

Интересно также изображение инструмента *тарапула*, которое мы находим в рукописи-предсказании (XVII в.).

Гр. Ачарян в средневековом стихотворении истолковал слово „тарапул“ как нечто горючее, не предполагая, что это может быть названием инструмента.

Таким образом, все вышеприведенные материалы довольно убедительно говорят о том, что армянский народ, начиная с древнейших времен, обладал уже музыкальными инструментами, при помощи которых он выражал свои чувства и настроения.

Систематическое и разностороннее изучение этих инструментов обогатит наши знания о древнейшей музыкальной культуре армянского народа.

